ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՄՇԴ-209-2025 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«27» «06» 2025 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տերյան» մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Լիլիթ Մելիքյանի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ֆինանսաբյուջետային վարչության Ն/17.3/15042-2025, 20.05.2025 թ. ծանուցագիրը և 2025 թվականի մայիսի 30-ին կնքված Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-209-2025 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.1-ին կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Պայմանագրի նախաբանում, 1.1-ին կետում և հավելված N 2-ի վերնագրում «Ազնավուրի Ռիթմեր» բառերը փոխարինել «Ֆրանսիական ռիթմեր՝ նվիրված Ազնավուրի հիշատակին» բառերով:

1.2. Պայմանագրի Հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 4 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Տերյան 72 շենք, 2-րդ մասն.
Կառավարական տուն N 2	«Այդիբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 11817000710800
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	ՀՎՀՀ 02577111
Գլխավոր քարտուղար՝	հեռ.՝ (374 99) 424523
	Տնօրեն՝
_____ **Հ. Հակոբյան**	_____ **Լ. Մելիքյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«30» «05» 2025 թ.
N ՄՇԴ-209-2025 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ֆրանսիական ռիթմեր՝ նվիրված Ազնավուրի հիշատակին»
ցուցադրության կազմակերպում

1	Կազմակերպության անվանում	«Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Տերյան 72
3.1	Անվանում	«Ֆրանսիական ռիթմեր՝ նվիրված Ազնավուրի հիշատակին» ցուցադրության կազմակերպում
3.2	Բովանդակություն	Ծրագիրն ուղղված է նորարարական լուծումների խթանմանը նորաձևության ոլորտում, հայկական ժամանակակից նորաձևության միջազգային ճանաչմանը և տարածմանը, ինչպես նաև ստեղծագործական գործունեությամբ զբաղվող ինքնազբաղ արվեստագետների աջակցությանը: Նախագիծը՝ միավորելով հայ և ֆրանսիացի մասնագետների փորձը, նպատակ ունի ստեղծել միջմշակութային համագործակցության նոր հարթակ՝ ներկայացնելով հայկական մշակույթն ու ինքնատիպությունը ֆրանսիական արվեստի նրբերանգների համադրությամբ: Միջոցառումների ընթացքում կցուցադրվեն հագուստի գործեր, որոնք արտացոլում են ֆրանսիական մշակութային կոդերը և ժամանակակից հայկական ոճաբանությունը: Նախագիծը կմեկնարկի Ֆրանսիայից: Հավաքածուի ցուցադրությունը կիրականացվի ստատիկ և ոչ ստատիկ ձևաչափով՝ 20 ստեղծագործությունների /զգեստների/ ցուցադրությամբ և ուղեկցվող ֆիլմով:

		«Ֆրանսիական ռիթմեր» ծրագիրը պարզապես նորաձևության ցուցադրություն չէ, այլ եզակի նախագիծ, որը կամուրջ է ստեղծում երաժշտության և նորաձևության, արվեստի և ոճի, անցյալի և ներկայի միջև:
3.3	Նպատակ	Ծրագրին նպատակ ունի խթանել նորարարական լուծումները, նպաստել ոլորտի զարգացմանը, արտերկրում հայկական նորաձևության հանրահռչակմանն ու տարածմանը, ինչպես նաև աջակցել ինքնազբաղ արվեստագետների գործունեությանը:
3.4	Անցկացման ժամկետ	Մայիս - հոկտեմբեր 2025թ.
3.5	Անցկացման վայր	Ֆրանսիա, Հայաստան, Վրաստան, Չեխիա
3.6	Ակնկալվող արդյունքներ	Հայկական նորաձևության դպրոցի հանրահռչակում և տարածում Միջազգային նոր կապերի հաստատում Ինքնազբաղ արվեստագետների գործունեության հանրահռչակում արտերկրում
3.7	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	4 ցուցադրություն 20 զգեստի պատրաստում 1 Ֆիլմի ստեղծում՝ 21 րոպե տևողությամբ 1 գովազդային հոլովակ 1200 հանդիսատես

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվhh 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ
ք. Երևան, Տերյան 72 շենք, 2-րդ մասն.
«Այդիբանկ ՓԲԸ
Հ/Հ 11817000710800
ՀՎՀՀ 02577111
հեռ.՝ (374 99) 424523
Տնօրեն՝

_____ **Լ. Մելիքյան**
(ստորագրություն)
Կ. Տ.